

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի

05.05.2022 թ. կայացած թիվ 10.21-22 նիստի

Ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից ներկա էին 28 –ը:

**Լսեցին՝** ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետում գործող ուսումնական ծրագրերի ղեկավարների հաստատման հարցը:

**Ելույթ ունեցավ՝** Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը: Նա նշեց, որ ֆակուլտետում գործում է հինգ ուսումնական ծրագրի: Հակոբյանը առաջարկեց քննարկել ուսումնական ծրագրերի ղեկավարների հետևյալ թեկնածուներին՝

1. «Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ» մասնագիտության համար՝ Ա. Վարդանյան
2. «Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն» մասնագիտության համար՝ Մ. Գրիգորյան
3. «Միջուկային ռեակտորների ֆիզիկան» մասնագիտության համար՝ Ա. Բալաբեկյան
4. «Ֆիզիկա» մասնագիտության համար՝ Ռ. Ալավերդյան:
5. «Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա» մասնագիտության համար՝ Գ. Քառյան:

Առաջին երեք մասնագիտացումների ղեկավարների թեկնածուները աշխատել են նշված ուսումնական ծրագրերի ստեղծման և ուսումնական պրոցեսում ներդրման պահից առ այսօր և տրամաբանական է հենց այդ թեկնածուների առաջադրումը:

«Ֆիզիկա» մասնագիտության ուսումնական ծրագիրը մինչ այժմ ղեկավարել է Ռ. Հակոբյանը, սակայն նոր կանոնակարգի համաձայն դեկանը իրավունք չունի լինելու ուսումնական ծրագրի ղեկավար: Այդ պատճառով առաջարկվում է Ռ. Ալավերդյանի թեկնածությունը: Ռ. Ալավերդյանը ներգրաված է եղել ուսումնական ծրագրերի մշակմանը որպես հանձնաժողովի անդամ:

«Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա» մասնագիտացման ծրագիրը մինչ այս ղեկավարել է Ա. Մելքոնյանը: Սակայն նա դիմում է ներկայացրել և անձնական պատճառներով հրաժարվել է ուսումնական ծրագրի ղեկավարի պարտականություններից:

Ռ. Հակոբյանը առաջարկեց քննարկել Գ. Քառյանի թեկնածությունը այս ուսումնական ծրագրի ղեկավարի համար:

**Ելույթ ունեցավ՝** Ե. Դալյանը: Նա նշեց, որ Գ. Քառյանը համեմատաբար վերջերս է դարձել ֆակուլտետի դասախոս և շատերը նրան լավ չեն ճանաչում: Այս պատճառով դժվար է օբյեկտիվ գնահատական տալ: Առաջարկվեց դիտարկել Գ. Քառյանին որպես ուսումնական ծրագրի ժամանակավոր պաշտոնակատար:

Այլ առաջարկներ չեղան:

Հարցը դրվեց քվեարկության: Քվեարկվել են ֆիզիկայի ֆակուլտետի ուսումնական ծրագրերի ղեկավարների թեկնածությունները:

Քվեարկությանը մասնակցել են ֆակուլտետի խորհրդի 28 անդամներ:

Քվեարկության արդյունքներն են՝

ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԶԵՌՆՊԱՀ
Ա. Վարդանյան «Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ» ուսումնական ծրագրի ղեկավար	28	-	-
Մ. Գրիգորյան «Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն» ուսումնական ծրագրի ղեկավար	28	-	-
Ա. Բալաբեկյան «Միջուկային ռեակտորների ֆիզիկան» ուսումնական ծրագրի ղեկավարներ	28	-	-
Ռ. Ալավերդյան «Ֆիզիկա» ուսումնական ծրագրի ղեկավար	28	-	-
Գ. Քառյան «Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա» ուսումնական ծրագրի ղեկավար	19	4	5

**Որոշեցին՝** Հաստատել քվեարկության արդյունքներով ընտրված ֆիզիկայի ֆակուլտետի ուսումնական ծրագրերի ղեկավարներին՝

1. «Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ»՝ Ա. Վարդանյան

2. «Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն»՝ Մ. Գրիգորյան
3. «Միջուկային ռեակտորների ֆիզիկան»՝ Ա. Բալաբեկյան
4. «Ֆիզիկա» մասնագիտության համար՝ Ռ. Ալավերդյան:
5. «Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա»՝ Գ. Քառյան:

Ֆիզիկայի Ֆակուլտետի

Գիտական խորհրդի նախագահ՝



Ռ.Ս. Հակոբյան

Գիտական խորհրդի քարտուղար՝



Գ.Հ. Հովհաննիսյան